Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Բյուջեներ քաղաքացիների համար» (CTR 439-255) ծրագրի վերջնական արտաքին բովանդակային (ծրագրային) գնահատման տեխնիկական առաջադրանք

I. Նկարագիր

Եվրոպական Միության ֆինանսավորմամբ գործարկվող «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) իրականացվում է «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի (ղեկավար կազմակերպություն), «Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն» ՀԿ-ի և «Ագորա Սենթրլ Յուրոփ» չեխական ՀԿ-ի համատեղ կոնսորցիումով: Ծրագիրը համաֆինանսավորվում է «Իրավաբանների հայկական ասոցիացիա» և «Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն» ՀԿ-ների կողմից:

Ծրագրի տևողությունը՝ **48 ամիս է**: Ծրագիրը սկսվել է **2022 թվականի դեկտեմբեր 8-ին** և ավարտվելու է **2026 թվականի դեկտեմբերի 7-ին:** Ծրագրի նախատեսված բյուջեն կազմում է **777,778 եվրո:** Ծրագիրը իրականացվում է Երևանում և ՀՀ մարզերում:

Ծրագրի **հիմնական նպատակն է՝** քաղաքացիական հասարակության մասնակցությամբ խթանել Հայաստանում ներառական և թափանցիկ բյուջետային գործընթացին: Ծրագրի **առանձնահատուկ նպատակն է՝** նպաստել պետական բյուջետային գործընթացներին քաղաքացիական հասարակության ուժեղացված մասնակցությանը:

Ծրագրի թիրախ 4 ոլորտներն են.

1. Արդարադատություն
2. Կրթություն
3. Գյուղատնտեսություն
4. Սոցիալական պաշտպանության ոլորտ

Ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ <u>հիմնական գործողությունները</u>.

Արդյունք 1. Քաղաքացիական հասարակության մասնակցության ընդլայնում հանրային բյուջետային գործընթացներում (Enhanced participation of Civil Society in public budgetary processes)

Այս արդյունքին հասնելու նպատակով ծրագրի շրջանակներում իրականացվել են քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կարողությունների զարգացման, բյուջետային տեղեկատվության հասանելիության բարելավման, բյուջետային վերլուծության և

մշտադիտարկման, շահերի պաշտպանության, հանրային քննարկումների կազմակերպման և երիտասարդ մասնագետների պատրաստմանն ու ներգրավմանն ուղղված գործողություններ։

Արդյունք 1.1. *ՔՀԿ-ների՝ բյուջետային գործընթացներին մասնակցության կարողությունների զարգացում*

Իրականացված գործողությունները.

1. **Բյուջետային տեղեկատվության մատչելիության գործիքների մշակում և տարածում։**

Մշակվել և հանրայնացվել (տարածվել) են պետական բյուջեի վերաբերյալ տեղեկատվության մատչելի ներկայացման գործիքներ, այդ թվում՝ թիրախային ոլորտների պարզեցված բյուջեներ, տեղեկատվական ինֆոգրաֆիկաներ, տեսանյութեր և այլ իրազեկման նյութեր։ Նաև մշակվել են արդարադատության, կրթության, սոցիալական պաշտպանության և գյուղատնտեսության ոլորտների պարզեցված բյուջեներ։

2. **ՔՀԿ-ների կարողությունների զարգացման ուսուցողական ծրագրերի իրականացում։**

Մշակված ՔՀԿ-ների կարողությունների զարգացման ծրագրի շրջանակներում կազմակերպվել և իրականացվել է Երիտասարդների և ՔՀԿ-ների կարողությունների զարգացման դպրոցի ուսուցման երկու հոսքը։ Դպրոցին մասնակցել են Երևանից և ՀՀ մարզերից ընտրված 40 ՔՀԿ-ների 80 ներկայացուցիչներ։

Ուսուցումն իրականացվել է առցանց և առկա ձևաչափերով՝ ներառելով չորս մոդուլ։ Ուսուցման շրջանակներում կազմակերպվել են դասախոսություններ, վարպետության դասեր, խմբային և անհատական վերլուծական առաջադրանքներ, ինչպես նաև ուսումնական այցեր թիրախային ոլորտի իրավասու մարմիններ։

3. **Փորձառու փորձագետների բաղկացած խմբի ստեղծում։**

Ստեղծվել է փորձառու փորձագետներից կազմված խումբ, որի անդամներն աշխատել են շահառու ՔՀԿ-ների/լրատվամիջոցների հետ՝ թիրախային ուղղություններով դասախոսություններ, գործնական աշխատանքներ, վարպետության դասեր անցկացնելու միջոցով։

4. **Մեթոդական աջակցության և գիտելիքի փոխանցման ապահովում։**

Ստեղծվել է budgets.am՝ Բյուջետային գիտելիքների փոխանակման հարթակը, որտեղ տեղադրվել են ուսումնական և մեթոդական նյութեր, այդ թվում՝ չորս ուսումնական մոդուլներ՝ պետական բյուջեի վերլուծության և շահերի պաշտպանության վերաբերյալ գիտելիքների շարունակական զարգացման նպատակով։

5. **Պետական բյուջեի վերլուծության և մոնիթորինգի իրականացման նպատակով ՔՀԿ-ներին 12 ենթադրամաշնորհային աջակցության տրամադրում։**

12 ՔՀԿ-ների տրամադրվել են ենթադրամաշնորհներ՝ պետական բյուջեի ծրագրերի կատարողականի հիմնական ցուցանիշների (KPI) վերլուծության, բյուջետային ծրագրերի մշտադիտարկման, ծախսերի վերահսկման և պարզեցված բյուջեների մշակման նպատակով։ Ենթադրամաշնորհային ծրագրերի շրջանակներում ՔՀԿ-ներն իրականացրել են թիրախային ոլորտների բյուջետային ծրագրերի ուսումնասիրություն և մշտադիտարկում, մշակել համապատասխան բյուջետային ծրագրերի վերլուծություններ և առաջարկություններ, որոնք ներկայացվել են ոլորտային պետական մարմիններին։

Արդյունք 1.2. *Քաղաքացիական հասարակության իրազեկվածության բարձրացում բյուջետային գործընթացների և մասնակցության հնարավորությունների վերաբերյալ*

Իրականացված գործողությունները.

1. **ՔՀԿ-ների/լրատվամիջոցների 17 ենթադրամաշնորհային աջակցության տրամադրում շահերի պաշտպանության արշավների իրականացման համար։**

Բյուջետային վերլուծության և մշտադիտարկման արդյունքների հիման վրա թիրախային չորս ոլորտներում շահերի պաշտպանության արշավների և հանրային քննարկումների կազմակերպման նպատակով ՔՀԿ-ներին և լրատվամիջոցներին տրամադրվել է 17 ենթադրամաշնորհային աջակցություն։
Դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում կազմակերպությունները իրականացրել են շահերի պաշտպանության արշավներ՝ ուղղված բյուջետային գործընթացների, ոլորտային քաղաքականությունների և բյուջետային ծրագրերի վերաբերյալ հանրային իրազեկվածության բարձրացմանը և համապատասխան պետական մարմինների հետ երկխոսության խթանմանը։

2. **Բյուջետային մշտադիտարկման և շահերի պաշտպանության արդյունքների ներկայացման և քննարկման միջոցառումների կազմակերպում։**

Կազմակերպվել են սեմինարներ և հանրային քննարկումներ՝ ՔՀԿ-ների կողմից իրականացված բյուջետային մշտադիտարկման արդյունքների, ոլորտային պարզեցված բյուջեների և բյուջետային գործընթացներում հանրային մասնակցության հնարավորությունների ներկայացման և քննարկման նպատակով։

3. **Հանրային քննարկումների և մասնակցային բյուջետային գործընթացների խթանում։**

Ծրագրի շրջանակներում աջակցություն է ցուցաբերվել պետական մարմինների և քաղաքացիական հասարակության միջև բյուջետային գործընթացներին վերաբերող երկխոսության կազմակերպմանը և ընդլայնմանը։ ՔՀԿ-ների մասնակցությամբ կազմակերպվել են պետական մարմինների հետ քննարկումներ կրթության, գյուղատնտեսության, արդարադատության և սոցիալական պաշտպանության ոլորտների բյուջետային գործընթացների վերաբերյալ։

Արդյունք 1.3. Գործընկեր ՔՀԿ-ների համար բյուջետային վերլուծության, մշտադիտարկման և շահերի պաշտպանության որակյալ մարդկային ռեսուրսների հասանելիության բարելավում

Իրականացված գործողությունները.

1. **Երիտասարդ մասնագետների դպրոցի կազմակերպում և ուսուցման իրականացում:**

Կազմակերպվել և իրականացվել է երիտասարդ մասնագետների դպրոցի երկու հոսքերի ուսուցում: Դպրոցի ուսուցումն իրականացվել է առցանց ձևաչափով՝ ներառելով չորս ուսումնական մոդուլ: Դպրոցում ուսուցանել են շուրջ 200 երիտասարդներ:

2. **Երիտասարդ մասնագետների մասնագիտական և գործնական կարողությունների զարգացում:**

Առցանց ուսուցման ավարտից հետո բարձր առաջադիմություն ցուցաբերած մասնակիցների համար կազմակերպվել է խորացված 12-օրյա ուսուցման դասընթաց:

3. **Երիտասարդ մասնագետների կողմից հանրային իրազեկման միջոցառումների իրականացում:**

Դպրոցի շրջանավարտների ներգրավմամբ կազմակերպվել և իրականացվել են հանրային իրազեկման սեմինարներ՝ պետական բյուջեի, բյուջետային վերլուծության և մշտադիտարկման, ինչպես նաև բյուջետային գործընթացներում հանրային մասնակցության վերաբերյալ գիտելիքների տարածման նպատակով:

4. **Երիտասարդ մասնագետների աշխատանքի տեղավորում ՔՀԿ-ներում՝ առանձին 12 ենթադրամաշնորհային ծրագրերի միջոցով:**

Դպրոցի շրջանավարտներից ընտրված երիտասարդ մասնագետներն աշխատանքի են տեղավորվել ծրագրի շրջանակներում դրամաշնորհային աջակցություն ստացած ՔՀԿ-ներում՝ որպես բյուջետային մասնագետներ:

Ընդհանուր առմամբ, ծրագրի շրջանակներում տրամադրվել են 41 ենթադրամաշնորհային ծրագրեր՝ երեք ուղղություններով՝

1. Պետական բյուջեի վերլուծության և մոնիթորինգի իրականացման նպատակով ՔՀԿ-ներին 12 ենթադրամաշնորհ:
2. Երիտասարդ մասնագետների աշխատանքի տեղավորում ՔՀԿ-ներում՝ առանձին 12 ենթադրամաշնորհի միջոցով:
3. Շահերի պաշտպանության արշավների իրականացման համար ՔՀԿ-ներին/լրատվամիջոցներին 17 ենթադրամաշնորհ:

** Նշված են Ծրագրի շրջանակներում իրականացված հիմնական գործողությունները: Դրանցից բացի, իրականացվել են նաև այլ գործողություններ, որոնք նույնպես ենթակա են գնահատման Ծրագրի վերջնական արտաքին գնահատման շրջանակներում:*

II. Արտաքին ծրագրային գնահատման նպատակը

Գնահատման նպատակն է ուսումնասիրել ԵՄ ֆինանսավորմամբ իրականացվող Ծրագրի շրջանակներում իրականացված գործողությունները, դրանց համապատասխանությունը Ծրագրի ընդհանուր և առանձնահատուկ նպատակներին, իրականացված գործողություններին և ակնկալվող արդյունքներին: Արտաքին գնահատման արդյունքները հիմնականում նախատեսված են Հայաստանում ԵՄ պատվիրակության և ծրագրի իրականացնողների համար:

III. Ուսումնասիրության հարցեր

Գնահատումը պետք է ներառի հետևյալ հարցերը.

- «Ծրագրային գործունեությունը որքանո՞վ է համապատասխանում ծրագրի հիմնական և առանձնահատուկ նպատակներին (համապատասխանություն):
- Որքանո՞վ է ծրագիրը համահունչ և փոխլրացնող եղել ոլորտի այլ նախաձեռնությունների հետ (համատեղելիություն):
- Որքանո՞վ են ռեսուրսները տնտեսող և արդյունավետ օգտագործվել (ռեսուրսների օգտագործման արդյունավետություն):
- Որքանո՞վ են ձեռք բերվել նախատեսված արդյունքները (արդյունավետություն):
- Ի՞նչ ազդեցություն է ունեցել ծրագիրը ուղղակի և անուղղակի շահառուների վրա (ազդեցություն):
- Որքանո՞վ են արդյունքները կայուն ծրագրի ավարտից հետո (կայունություն):

Միաժամանակ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ծրագիրը ավարտման փուլում է, առավել ուշադրություն պետք է դարձվի վերջին երկու հարցերին. ազդեցությունը և կայունությունը:

Գնահատման վերլուծությունը պետք է ներառի հետևյալ չափանիշները

Համապատասխանություն (Relevance)
Գնահատել՝

- որքանով են ծրագրի նպատակները համապատասխանել շահառու ՔՀԿ-ների, այլ շահագրգիռ կողմերի, Հայաստանի Հանրապետության կառավարության և ֆինանսավորող կազմակերպության կարիքներին և քաղաքականություններին,

- արդյոք ծրագրի ընթացքում հստակ բացահայտվել և վերլուծվել են առկա խնդիրները, հաշվի են առնվել նախկին փորձից քաղված դասերը և առկա նախաձեռնությունները,
- որքանով են ծրագրի նպատակները, ակնկալվող արդյունքները և դրանց հասնելու համար նախատեսված գործողությունները ձևակերպվել հստակ և փոխկապակցված տրամաբանական կառուցվածքով։

Համատեղելիություն (Coherence)

Գնահատել՝

- որքանով է ծրագիրը համահունչ եղել Հայաստանում բյուջետային թափանցիկության, մասնակցային կառավարման, հանրային ֆինանսների կառավարման ոլորտներում իրականացվող այլ նախաձեռնություններին և/կամ քաղաքականություններին,
- որքանով են ծրագրի գործողությունները լրացրել պետական մարմինների և ՔՀԿ-ների կողմից իրականացվող համապատասխան ծրագրերն ու նախաձեռնությունները,
- որքանով է ապահովվել համագործակցությունն ու համակարգումը համապատասխան դերակատարների հետ, և արդյոք խուսափվել է գործողությունների կրկնությունից։

Ռեսուրսների օգտագործման արդյունավետություն (Efficiency)

Գնահատել՝

- որքանով են ծրագրի ֆինանսական, մարդկային և ժամանակային ռեսուրսներն օգտագործվել տնտեսող և արդյունավետ եղանակով՝ նախատեսված արդյունքներն ապահովելու համար,
- որքանով է ծրագրի բյուջեի պլանավորումն ու ընթացիկ կառավարումն ապահովել ռեսուրսների պատշաճ օգտագործումը, և արդյոք բյուջետային սահմանափակումները կամ ռեսուրսների անբավարարությունը որևէ կերպ ազդել են ծրագրի իրականացման և արդյունքների ապահովման վրա,
- որքանով են ծրագրի գործողություններն իրականացվել սահմանված կամ հիմնավորված կերպով վերանայված ժամկետներում,
- որքանով են ծրագրի իրականացման ընթացքում դրսևորվել ճկունություն և հարմարվողականություն՝ փոփոխվող հանգամանքներին արձագանքելու և ռեսուրսներն արդյունավետ օգտագործելու նպատակով,
- որքանով են արդյունավետ եղել ծրագրի կառավարման և համակարգման մեխանիզմները, այդ թվում՝ կոնսորցիումի անդամների, շահառուների և ֆինանսավորող կազմակերպության հետ համագործակցությունը։

Արդյունավետություն (Effectiveness)

Գնահատել՝

- որքանով են իրականացվել ծրագրի նախատեսված նպատակներն ու արդյունքները,
- ինչպիսի արդյունքներ է ծրագիրն ապահովել ուղղակի և անուղղակի շահառուների, ինչպես նաև հիմնական շահագրգիռ կողմերի համար,

- որքանով են ծրագրի գործողություններն ու կիրառված մոտեցումները նպաստել նախատեսված արդյունքների ձեռքբերմանը,
- արդյոք արդյունքների ձեռքբերման վրա ազդեցություն են ունեցել ծրագրով նախատեսված ենթադրությունները, ռիսկերը կամ չնախատեսված արտաքին գործոնները, և որքանով է ծրագրի կառավարումն արձագանքել այդ հանգամանքներին,
- որքանով է ծրագիրը կարողացել ապահովել հիմնական շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ պետական մարմինների աջակցությունն ու ներգրավվածությունը:

Ազդեցություն (Impact)

Գնահատել՝

- որքանով է ծրագիրը նպաստել իր անմիջական արդյունքներից ավելի լայն և երկարաժամկետ դրական կամ բացասական փոփոխությունների առաջացմանը,
- որքանով է ծրագիրը նպաստել բյուջետային գործընթացներում ՔՀԿ-ների մասնակցության, պետական մարմինների հետ երկխոսության, բյուջետային թափանցիկության և հաշվետվողականության փոփոխություններին,
- արդյոք ծրագրի իրականացման արդյունքում առաջացել են նախատեսվածից դուրս դրական կամ բացասական ազդեցություններ, և ինչ նշանակություն են դրանք ունեցել ծրագրի ընդհանուր ազդեցության տեսանկյունից,
- որքանով են արձանագրված ավելի լայն փոփոխությունները պայմանավորված ծրագրով կամ դրանց առաջացմանը նպաստել են ծրագրի շրջանակներում իրականացված գործողությունները:

Կայունություն (Sustainability)

Գնահատել՝

- որքանով են ծրագրի արդյունքներն ու օգուտները պահպանվել կամ պահպանվելու հավանականություն ունեն ծրագրի ավարտից հետո,
- որքանով են ծրագրի արդյունքների նկատմամբ ձևավորվել շահառուների և հիմնական շահագրգիռ կողմերի սեփականության զգացում, ներգրավվածություն և պատասխանատվություն,
- որքանով են շահառու ՔՀԿ-ներն ու համապատասխան պետական մարմինները տիրապետում ծրագրի արդյունքները շարունակելու և օգտագործելու համար անհրաժեշտ կարողություններին,
- որքանով են առկա ֆինանսական, ինստիտուցիոնալ, քաղաքական և այլ անհրաժեշտ նախադրյալներ ծրագրի արդյունքների շարունակականությունն ապահովելու համար,
- որքանով են պետական մարմինների քաղաքականություններն ու առաջնահերթությունները, ինչպես նաև հասարակական և այլ շահագրգիռ կողմերի աջակցությունը նպաստում կամ խոչընդոտում ծրագրի արդյունքների պահպանմանը,
- ինչ ռիսկեր կարող են ազդել ծրագրի արդյունքների շարունակականության վրա, և որքանով են առկա դրանց դիմակայելու մեխանիզմներ:

ԵՄ ավելացված արժեք (EU Added Value)

Գնահատել՝

- որքանով է ԵՄ միջամտությունն ապահովել լրացուցիչ օգուտներ՝ համեմատած այն արդյունքների հետ, որոնք հնարավոր կլիներ ապահովել միայն ԵՄ անդամ պետությունների միջամտությունների արդյունքում,
- որքանով է ԵՄ ֆինանսավորումն ու աջակցությունը հնարավորություն տվել իրականացնել այնպիսի գործողություններ և ապահովել այնպիսի արդյունքներ, որոնք առանց ԵՄ միջամտության հնարավոր չէր լինի ապահովել կամ հնարավոր կլիներ ապահովել ավելի սահմանափակ չափով,
- որն է եղել ԵՄ միջամտության առանձնահատուկ դերը Ծրագրի արդյունքների ձեռքբերման և դրական փոփոխությունների առաջացման գործում,
- որքանով են Ծրագրի շրջանակներում ձեռք բերված լրացուցիչ արդյունքներն ու օգուտները պայմանավորված ԵՄ միջամտությամբ և ինչ լրացուցիչ արժեք են դրանք ստեղծել շահառուների, գործընկեր կառույցների և այլ շահագրգիռ կողմերի համար։

IV. Սույն գնման մրցույթի իրականացման հիմնարար սկզբունքներ

«Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը սույն գնման մրցույթն իրականացնելիս ղեկավարվում է հետևյալ հիմնարար սկզբունքներով.

1. **Խտրականության արգելքի սկզբունք**՝ գնումների գործընթացում ռասայական, գենդերային, կրոնական, ազգային կամ էթնիկական պատկանելության հիմքով որևէ խտրականության դրսևորում բացառելու նպատակով։

2. **Բաց և ազատ մրցակցության սկզբունք**՝ ապահովելով գնումների գործընթացի անաչառությունը, պատշաճ փաստաթղթավորումը և մրցակցային պայմանները, ինչպես նաև բացառելով որևէ տեսակի արտոնյալ վերաբերմունքն ու շահերի բախումը։

3. **«Լավագույն գին/որակ հարաբերակցության (best value for money) սկզբունք»**՝ պայմանագիրը շնորհվում է այն հայտատուին, որի հայտն ապահովում է որակի և գնի լավագույն հարաբերակցությունը՝ սույն տեխնիկական առաջադրանքով սահմանված գնահատման չափանիշների և միավորների հիման վրա։

4. **ԵՄ պատժամիջոցների ցուցակների պահպանման սկզբունք**՝ բացառելով ԵՄ պատժամիջոցների ցուցակներում ընդգրկված անձանց մասնակցությունը գնումների գործընթացին։

5. **Ծագման կանոնի (Rule of Origin) պահպանման սկզբունք**։

V. Մեթոդաբանություն

Գնահատումը պետք է ներառի հետևյալ աշխատանքները՝ փաստաթղթերի ուսումնասիրություն, ուղղակի և անուղղակի շահառուների, գործընկերների և այլ շահագրգիռ կառույցների ներկայացուցիչների հետ այցելությունների և հանդիպումների կազմակերպում, հարցազրույցների անցկացում, վերլուծությունների իրականացում, հաշվետվության նախագծի պատրաստում, հետադարձ կապի ապահովում, գնահատման ընթացքում մշակված փաստաթղթերի խմբագրում և հաշվետվության վերջնական տարբերակի պատրաստում՝ հայերեն և անգլերեն լեզուներով:

Փաստաթղթերի ուսումնասիրությունը պետք է ներառի Ծրագրի նյութերի ուսումնասիրությունը, այդ թվում, բայց չսահմանափակվելով, հետևյալ փաստաթղթերով՝ Ծրագրի առաջարկը, տրամաբանական կառուցվածքը, հաշվետվությունները, ելակետային և վերջնական հետազոտությունները (baseline and end-line surveys), հաղորդակցության նյութերը, ենթադրամաշնորհային մրցույթների հայտարարությունները և ուսուցումների հայտարարությունները:

Գնահատողը պետք է իրականացնի մասնակցային գնահատում՝ ապահովելով շահագրգիռ կողմերի ակտիվ ներգրավումը: Ներգրավվող շահագրգիռ կողմերի շրջանակը ներառում է, սակայն չի սահմանափակվում հետևյալ անձանցով՝ Ծրագրի աշխատակիցներ, մասնագետներ և փորձագետներ, այդ թվում՝ կոնսորցիումի անդամներ, գործընկեր կառույցների պաշտոնատար անձինք, հանրային ծառայողներ, Ծրագրի շրջանակներում ուսուցում անցած և ենթադրամաշնորհ ստացած ՔՀԿ-ներ, ուսուցում անցած և ՔՀԿ-ներում աշխատանքի անցած երիտասարդ մասնագետներ, ինչպես նաև դոնոր կազմակերպության ներկայացուցիչ:

Գնահատողը պետք է հաշվի առնի այն հանգամանքը, որ ՔՀԿ-ները և լրատվամիջոցները գործունեություն են ծավալում ինչպես Երևանում, այնպես էլ ՀՀ մարզերի տարբեր քաղաքային համայնքներում: Պետք է ուշադրություն դարձնել նաև շահագրգիռ կողմերից տեղեկատվության հավաքագրման համար համապատասխան հետազոտական մեթոդների ընտրությանը և կիրառմանը, այդ թվում՝ անհատական հարցազրույցներին, ֆոկուս խմբերին, ինչպես նաև համապատասխան հարցաշարերի մշակմանն ու օգտագործմանը:

VI. Ընտրության չափանիշներ

Որպես անկախ գնահատող կընտրվի այն ֆիզիկական անձը, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերը, կամ իրավաբանական անձը, որը սահմանված ժամկետում կներկայացնի ընտրությանը մասնակցելու ամբողջական հայտ:

Հայտերի ստուգումը իրականացվում է երկու փուլով:

Փուլ 1. Հայտերի նախնական ստուգում (պարտադիր պայմաններ)

Ստուգվում է՝
- Հայտը ներկայացվել է սահմանված ժամկետում:
- Ներկայացված է ամբողջական հայտը:
- Հայտը ներառում է սույն տեխնիկական առաջադրանքի «Հայտերի ներկայացման հրավեր» բաժնով պահանջվող բոլոր փաստաթղթերը, այդ թվում՝ ստորագրված հայտարարությունը և շահերի բախման բացակայության հավաստագիրը:

Նշված պայմաններին չհամապատասխանող հայտերը չեն անցնում հաջորդ փուլ:

Փուլ 2. Համապատասխան հայտերի միավորային գնահատում (100 միավոր)

Գնահատման չափանիշ	**Առավելագույն միավոր**
Առաջարկվող մեթոդաբանության որակը	25
Հայտատուի որակավորումը և մասնագիտական փորձը	20
Մեթոդաբանության և աշխատանքային պլանի իրատեսականությունը[1]	20
Սահմանված ժամկետներում գնահատումն ավարտելու կարողությունը	15
Գնային առաջարկի արդյունավետությունը*	20
Ընդամենը	**100**

* Գնային միավորը հաշվարկվում է հետևյալ կերպ՝ (նվազագույն առաջարկված գին ÷ տվյալ հայտի գին) × 20:

VII. Հաշվետվությանը ներկայացվող պահանջներ

[1] Գնահատվելու է մեթոդաբանության և աշխատանքային պլանի իրատեսականությունը՝ աշխատանքների հաջորդականության, նախատեսված գործողությունների և ռեսուրսների տեսանկյունից:

Գնահատողը՝ հայերեն և անգլերեն տարբերակներով պետք է ներկայացնի հետևյալ փաստաթղթերը.

1. Գնահատման հաշվետվության նախագիծ (ներկայացմանը վերջնաժամկետը՝ 2026թ.-ի դեկտեմբերի 25-ին)։
2. Վերջնական հաշվետվություն (ներկայացմանը վերջնաժամկետը՝ 2027թ.-ի հունվարի 10-ին)։ Վերջնական հաշվետվությունը պետք է կազմված լինի հետևյալ բաժիններից.
   ա) Գործադիր ամփոփում (առավելագույնը 2 էջ)։
   բ) Գնահատման ամփոփում PowerPoint ձևաչափով։
   գ) Համատեքստի և ծրագրի համառոտ նկարագիր։
   դ) Գնահատման նպատակների և խնդիրների նկարագիր։
   ե) Գնահատման մեթոդաբանության և գնահատման ընթացքում տեղեկատվության հավաքագրման նպատակով օգտագործված մեթոդաբանության, այդ թվում՝ գործիքների նկարագիր։
   զ) Գնահատման արդյունքում բացահայտված հիմնական փաստերի, նվաճված արդյունքների, մարտահրավերների և եզրակացությունների ներկայացում։
   է) Քաղված դասերի քննարկում։
   ը) Առաջարկություններ (ծրագրային և այլ)։
   թ) Հավելվածներ, այդ թվում դիտարկված ծրագրի փաստաթղթերի և օգտագործված գրականության ցանկ, անձանց և կազմակերպությունների ցանկ, ում հետ անցկացվել են հարցազրույցներ, հանդիպումներ, ֆոկուս խմբեր և այլն։

Գնահատման հաշվետվության նախագիծը ներկայացնելուց հետո, Գնահատողը պետք է ծրագիրն իրականացնողի հետ կազմակերպի դրա բանավոր ներկայացում և քննարկում։ Ծրագիրն իրականացնողը պետք է ներկայացնի իր կարծիքը, որը պետք է հաշվի առնվի նախքան վերջնական հաշվետվության ներկայացնելը։

VIII. Աշխատանքային պլան և ժամանակացույց

Իրավաբանների հայկական ասոցիացիան նախատեսում է Գնահատողին ընտրել մինչև 2026թ.-ի նոյեմբերի 24-ը։ Ընտրված թեկնածուն պետք է ի վիճակի լինի գնահատումը սկսել 2026թ.-ի նոյեմբերի 25-ից։

Գնահատման հաշվետվության նախագիծը պետք է ներկայացվի մինչև 2026թ.-ի դեկտեմբերի 25-ը։ Գնահատման հաշվետվության նախագծի բանավոր ներկայացումը և քննարկումը պետք է անցկացվի մինչև 2026թ.-ի դեկտեմբերի 29-ը։ Վերջնական հաշվետվության ներկայացման վերջնաժամկետը՝ 2027թ.-ի հունվարի 10-ին։

ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ

Իրավաբանների հայկական ասոցիացիան սույն գնահատումը իրականացնելու նպատակով ընդունում է հայտեր ֆիզիկական անձանցից, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերից և իրավաբանական անձանցից: Հայտատուները պետք է ներկայացնեն հայերեն լեզվով հայտ, որը պետք է ներառի.

- Հետաքրքրության նամակ՝ ներկայացնելով դիմորդի հետաքրքրվածությունը գնմանը մասնակցելու և իր (կազմակերպության դեպքում՝ կազմակերպության և թիմի անդամների) համապատասխանությունը սույն տեխնիկական առաջադրանքով սահմանված պահանջներին:
- Ինքնակենսագրություն (CV), որը մանրամասն ներկայացնում է Գնահատող(ներ)ի որակավորումը, սույն տեխնիկական առաջարկով նկարագրված չափանիշներին համապատասխանումը, ներառյալ նույն ոլորտում իրականացրած նմանատիպ աշխատանքների ցանկը:
- Հնարավորության կամ առկայության դեպքում Դիմումատուի կողմից վերջին երեք տարիների ընթացքում պատրաստված գնահատման հաշվետվության օրինակ (հայերեն և անգլերեն լեզուներով):
- Առաջարկվող գնահատման մեթոդաբանության և գնահատման ընթացքում տեղեկատվության հավաքագրման և վերլուծության նպատակով օգտագործվելիք գործիքների նկարագիր:
- Աշխատանքային պլանի և բյուջեի նախագիծ՝ ՀՀ դրամով, առանց ԱԱՀ, ներառյալ բոլոր ծախսերը:
- Հայերեն և անգլերեն լեզուների իմացությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ, վկայական, հավաստագիր, հայտատուի կողմից նախկինում պատրաստված գնահատման հաշվետվության նմուշ կամ այլ փաստաթուղթ):
- Կազմակերպության և անհատ ձեռնարկատերի դեպքում նաև՝ պետական գրանցման (հաշվառման) վկայականի պատճեն, կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարի մասին տեղեկություններ, Գնահատող(ներ)ի մասին տեղեկություն: Ֆիզիկական անձի դեպքում՝ անձնագրի/նույնականացման քարտի պատճեն:

Անհրաժեշտության դեպքում Իրավաբանների հայկական ասոցիացիան կարող է պահանջել լրացուցիչ փաստաթղթեր՝ ինչպես բնօրինակ, այնպես էլ՝ պատճեն:

Հանձնաժողովի կողմից կդիտարկվեն միայն ամբողջական հայտերը:

Հայտերը պետք է ուղարկել հետևյալ էլեկտրոնային փոստին՝ info@armla.am, նամակի թեմայի տողում նշելով՝ **««Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագրի արտաքին գնահատում»:**
Մրցույթի վերաբերյալ հարցեր և պարզաբանումներ ունենալու դեպքում դրանք կարող եք ներկայացնել հետևյալ էլեկտրոնային փոստին՝ info@armla.am:

Հայտերի ներկայացման վերջնաժամկետն է՝ 2026թ.-ի նոյեմբերի 20-ը, Երևանի ժամանակով՝ **ժամը 17:00-ը**։

Ծանոթություն.
Անհրաժեշտության դեպքում, Իրավաբանների հայկական ասոցիացիան կարող է փոխել սույն տեխնիկական առաջադրանքով սահմանված ժամկետները, որի մասին տեղեկությունը կհրապարակվի Իրավաբանների հայկական ասոցիացիայի կայքում՝ https://armla.am ։